

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՐՎՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ


Դ.Գ. ԳԱԼՈՅԱՆ
«22» Դեկտեմբեր 2022թ

ԿԱՐԾԻՔ առաջատար կազմակերպության

Արսեն Սլավիկի Ընքոյանի «Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում» թեմայով, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանկային գործի և ապահովագրության» և «Ֆինանսներ» ամբոնների համատեղ նիստում: Նիստին ներկա էին՝ «Բանկային գործի և ապահովագրության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ. դոցենտ Ա.Մարդոյանը (նախագահող), «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ, տ.գ.թ. դոցենտ Լ.Բարխուդարյանը, տ.գ.թ., դոցենտ Ռ.Սահակյանը (գրախոսող), տ.գ.թ., դասախոս Ա.Մխիթարյանը (գրախոսող), տ.գ.թ., պրոֆեսոր Ս.Սուքիասյանը (գրախոսող), տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Մաթևոսյանը, տ.գ.թ., դոցենտ Է. Աղաբեկյանը, տ.գ.թ., դոցենտ Ս.Պողոսյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ներսիսյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Բաղդասարյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Սչանյանը, տ.գ.թ., դոցենտ Լ.Ղազարյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հարությունյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Սարգսյանը, տ.գ.թ., դասախոս Տ.Բեկթեմուրյանը, տ.գ.թ., դասախոս Հ.Սարգսյանը, տ.գ.թ., դասախոս Հ.Մուրադյանը, տ.գ.թ., դոցենտ Մ.Խաչատրյանը, տ.գ.թ., դասախոս Ն.Սուրյանը, տ.գ.թ., ավագ դասախոս Մ.Ասլանյանը, տ.գ.թ., դասախոս Լ.Հարությունյանը, տ.գ.թ., դասախոս Լ.Հովականյանը, տ.գ.թ., դոցենտ Հ.Գրիգորյանը, տ.գ.թ., դասախոս Ս.Իսրայելյանը, դասախոս Ա.Ավետիսյանը, դասախոս Ն.Բալասանյանը, տ.գ.թ., դասախոս Մ. Մաթևոսյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Հ.Սաֆարյանը, ինչպես նաև ասպիրանտներ և հայցորդներ:

Արենախոսության թեմայի արդիականությունը

Անորոշության պայմաններում որոշման ընդունման անհրաժեշտությունը, և հետևաբար, ռիսկը, ներկայումս բնորոշ է տնտեսական գործունեության բոլոր սուբյեկտներին, այդ թվում՝ նաև բանկային ոլորտին: Յուրաքանչյուր տնտեսական սուբյեկտի աշխատանքի նպատակը երկարատև ժամանակահատվածում առավելագույն շահույթի ստացումն է: Ռիսկի պայմաններում որոշումների ընդունման և գործունեության պլանավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը ստիպում է ընկերության ղեկավարությանը օպտիմացնել աշխատանքը՝ հաշվի առնելով նշված գործոնը:

Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ և բանկային գործունեության պրակտիկայում վարկային ռիսկերի կառավարումը համարվում է բանկային գործունեության հիմնաքարը: Վարկային ռիսկի կառավարման համար նախ պետք է ճանաչել, գնահատել և չափել այն: Վարկային ռիսկի գնահատումը իրենից ներկայացնում է վարկի հետ կապված պարտավորությունների ռիսկի գնահատման հենքի բացահայտում: Որոշ դեպքերում բանկերի համար վարկային ռիսկը ավելի կարևոր է քան շուկայական ռիսկը: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ բանկերը կենտրոնացած են ավանդական վարկավորման վրա և ավելի քիչ՝ կապիտալ շուկայի գործառնության իրականացման վրա: ՀՀ-ում առևտրային բանկերի հիմնական գործունեությունը ավանդական վարկավորումն է: ՀՀ առևտրային բանկերի համար վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը ունի կենսական մեծ նշանակություն:

Վարկային և պարտքային քաղաքականությունը առևտրային բանկերի համար կորպորատիվ կառավարման հիմնական բաղադրիչն է, այն կարգավորում է բանկի հիմնական գործունեությունը՝ վստահելի և վերադարձելի հիմքով վարկերի տրամադրումը, միաժամանակ պաշտպանելով ներդրողների շահերը և բարձրացնելով սեփականատիրական արժեքը: Իսկ դա մեծապես կախված է վարկային ռիսկի կառավարման արդյունավետության աստիճանից: Ռիսկը շուկայական տնտեսության ուղեկիցն է: Ժամանակակից տնտեսագիտական

գրականությունը հավաստում է, որ վարկային ռիսկերի կառավարումը բանկային գործունեության հիմնաքարն է:

Հետազոտական թեմայի ընտրության համար մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ ժամանակակից ֆինանսական շուկան հատկանշվելով արագ զարգացող փոփոխություններով առևտրային բանկերի համար ստեղծել է նոր մարտահրավերներ այդ զարգացումներին և փոփոխություններին ինտեգրվելու գործընթացում: Անհրաժեշտություն է առաջանում վարկային ռիսկի գնահատման գործընթացում կիրառել նոր և ապագային միտված գործիքակազմ: ՀՀ-ում առևտրային բանկերը իրենց գործունեության գրեթե բոլոր ոլորտներում առաջնորդվում են ավանդական մեթոդներով, սակայն մրցակցությունը և տնտեսական զարգացման մարտահրավերները պահանջում են համապատասխան քայլեր ձեռնարկել ժամանակակից ֆինանսական շուկաների կառուցվածքին հարմարվելու համար:

Արենախոսության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը

Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսացել ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի գնահատման և կառավարման մեխանիզմները, միջազգային փորձը, և դրանց հիման վրա առաջարկել վարկային ռիսկի գնահատման և կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստող մեխանիզմներ և գործիքակազմ, հաշվի առնելով նաև ֆինանսաբանկային համակարգում տեղի ունեցող փոփոխությունները: Նման մոտեցմամբ հետազոտության իրականացումը հատկապես անհրաժեշտ է ապագայում տեղի ունենալիք փոփոխություններին ինտեգրվելու տեսանկյունից: Այս նպատակի իրագործման համար հետազոտության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման մեխանիզմները և մոդելները,

- Հետազոտել ֆինանսաբանկային համակարգում վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, համաշխարհային ֆինանսաբանկային շուկաների փորձը՝ ապագային ուղղված մեխանիզմների մշակման հնարավորություն ստանալու համար,
- Ցույց տալ նորագույն տեխնոլոգիաների օգտագործման անհրաժեշտությունը ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար,
- Մշակել մոդել, որը հաշվի է առնում վարկային ռիսկի կառավարման ավանդական գործոնները և միաժամանակ հիմնված է նոր տեխնոլոգիաների և ֆինանսական շուկաներ մուտք գործող նոր մեխանիզմների վրա,
- Գնահատել ստեղծված մոդելի գործնական օգտագործման արդյունավետությունը,
- Հաշվի առնելով իրականացված հետազոտությունները առաջարկել փոփոխություններ և նորարական մոտեցումների վրա հիմնված գործիքակազմի կիրառում, որն ուղղված կլինի վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունն, իր դրական արժանիքներով հանդերձ, ունի նաև որոշակի թերություններ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Ատենախոսության մեջ ներկայացված գիտական նորույթներից առաջինը վերաբերում է առևտրային բանկերի շրջանում կատարված հարցումներին և դրանց արդյունքներին (էջ 7): Կարծում ենք, որ հարցումը որպես գիտական նորույթ ներկայացնելու հեղինակի մոտեցումն ընդունելի չէ, քանի որ.

ա/ Հարցումն իրականացվել է 17 առևտրային բանկերից 5-ում (էջ 73), որոնցից ընտրվել են միայն 3 բանկերի կողմից տրամադրված պատասխանները: 17,6% ներկայացվածության աստիճանը բավարար չէ որևէ հարցի վերաբերյալ ծանրակշիռ փաստարկներ ներկայացնելու, և, առավել ևս, հետևություններ անելու համար:

բ/ Հարցման ընթացքում կատարված եզրահանգումներից և ոչ մեկը (էջ 73-74) չի կարող դիտարկվել որպես արտառոց բացահայտում («ՀՀ առևտրային բանկերը

վարկի ռիսկի գնահատման և կառավարման գործընթացներում առաջնորդվում են սեփական մոտեցումներով», «Վարկային ռիսկի կառավարման հետ կապված խնդիրները մասնագետները կապում են տեղեկատվության պակասի հետ», և այլն):

2. Վիճելի է հեղինակի պնդումն առ այն, որ «Փոքր բանկերը կարող են ունակ չլինել բարդ պրոդուկտների հետ աշխատել կամ վարկեր տրամադրել կոնկրետ բիզնես-ուլորտների» (էջ 16): Նման գործունեությունը պայմանավորված է ոչ թե բանկի չափերով, այլ բանկի կողմից իրականացվող վարկային քաղաքականությամբ, վարկավորման բնագավառում արհեստավարժ մասնագետների առկայությամբ, ծրագրային ապահովվածությամբ և մրցակցային միջավայրով: Ավելին՝ հենց բարդ պրոդուկտների հետ տարվող աշխատանքները կարող են փոքր բանկերին հնարավորություն տալ դիմակայել խոշոր բանկերի հետ մրցակցությանը, զբաղեցնելով շուկայում իր ուրույն տեղն ու դիրքը:

3. Առնվազն անհասկանալի է հեղինակի այն միտքը, որ վարկային ռիսկը չափվում է երկարաժամկետ հորիզոնում (տարեկան կտրվածքով կամ ավելի երկար ժամանակահատվածի համար) (էջ 19): Վարկային ռիսկի կառավարումն առևտրային բանկերում անընդհատ գործընթաց է և ժամանակային որևէ միջակայքից կախվածություն չունի: Օրինակ՝ վարկային ռիսկի զսպմանն ուղղված՝ հաճախորդների վարկունակություն գնահատումը կատարվում է վարկի տրամադրմանը նախորդող ժամանակային սեղմ միջակայքում, իսկ վարկային ռիսկը կառավարող ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները հաշվարկվում են ամսական կտրվածքով: Կախված վարկերի որակից՝ առնվազն ամիսը մեկ անգամ կատարվում է վարկային պորտֆելի որակի վերագնահատում, ինչը ևս միտված է վարկային ռիսկի խելամիտ կառավարմանը, և այլն:

4. Ատենախոսության 70-րդ էջում բանկերում ձևավորվող հատուկ պահուստին կատարվող հատկացումները հեղինակը ներկայացրել է միասնական սանդղակով՝ անկախ արժույթից: Մինչդեռ, համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ի 4-րդ կետի՝ հատկացումների սանդղակը

հստակ տարանջատված է, «Հ դրամով՝ առանձին, արտարժույթով՝ առանձին սահմանաչափերով:

5. Աշխատանքի 2.2 ենթակետում ներկայացված են վարկային ռիսկի կառավարման որոշ միջազգային մոդելներ, սակայն պարզ չի, թե հեղինակը ինչու է ընտրել այդ մոդելների ներկայացումը (սակայն ոչ վերլուծությունը): Միջազգային պրակտիկայում և ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկի կառավարման առավել հաճախ կիրառվող մոդելները ընդհանրապես չեն ուսումնասիրվել:

6. Ատենախոսության 3.1 ենթակետում թերի է վերլուծվել Բլոկչեյն և ԱԲ տեխնոլոգիաների կիրառելիությունը բանկային համակարգի ռիսկերի կառավարման գործում, չկան որևէ պրակտիկ դեպքերի գնահատումներ, որևէ չափելի և գնահատելի մոդել, ինչը կարող է օգտագործվել ՀՀ կամ այլ երկրի բանկային համակարգում վարկային ռիսկ գնահատելու կամ կառավարելու գործում: Հաշվի առնելով ,Բլոկչեյնի և ԱԲ բանկային համակարգում կիրառման մեծ հետաքրքրությունը, բանկերը այս ուղղությամբ դեռևս ակտիվ քայլեր չեն ձեռնարկում տեխնոլոգիաների մեծ գների և դրանց կիրառման ուղղության դեռևս չբացահայտված ռիսկերի պատճառով: Վերջիններիս մասին աշխատանքում ընդհանրապես անդրադարձ չկա:

Եզրակացություն

Հետազոտության խնդիրների և ստացված արդյունքների հիմնադրույթներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Արսեն Սլավկի Ըոքոյանի «Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը վերագրյալ դիտողություններին պաշտպանության ժամանակ հիմնավոր պարզաբանում ներկայացնելու պարագայում՝ արժանի կլինի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը.00.02 -


«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» և «Բանկային գործի և
ապահովագրության» ամբիոնների համատեղ նիստում 29.04.2022թ
(արձանագրություն թիվ 8):

ՀՊՏՀ «Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ

 Ա.Վ.Մարդոյան

ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ

 Լ.Վ.Բարխուդարյան

«Ֆինանսներ» ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ.

 Ս.Ս.Սուքիասյան

«Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

 Ռ.Ա.Սահակյան

«Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

 Ա.Ս.Մխիթարյան

Ա.Վ.Մարդոյանի, Լ.Վ.Բարխուդարյանի, Ս.Ս.Սուքիասյանի, Ռ.Ա.Սահակյանի և
Ա.Ս.Մխիթարյանի ստորագրությունները հաստատում են՝

ՀՊՏՀ գիտքարտուղար

 Ս.Տ.Հարությունյան
02.05.2022

